233
4 IV 2.

Ա. ՏԱՐԻ ՈՒՐԲԱԹ 12 ՅՈՒՆՎԱՐ 1896 ԹԻՒ 1

# ԻՐԱՒՈՒՆՔ

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բաժանորդագրութիւն

| | | |
|---|---|---|
| Պուլկարիոյ համար տարեկան | | 6 ֆր. |
| " " | 6 ամսոյ | 3 " |
| " " | 3 " | 2 " |
| Արտասահմանի համար տարին | | 8 " |
| Ծանուցմունք, տողը | | 40 սանթիմ |

ՀԱՍՑԷ

Խմբագրութիւն «Իրաւունք» լրագրոյ Վառնա (Պուլկարիա)

Редакция на вѣстникъ „Иравункъ" ВАРНА (България).

Rédaction du journal „Iravounk" VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եթէ չեն տպուիր և յօդուածագիրներէն միայնակ հրատարակուին :

## ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

ԻՐԱՒՈՒՆՔ, որ 1885 թուականին ծնունդ առած և մի կարճատեւ գոյութենէ յետոյ ատենական պարագայից բերմամբ դադրած էր հրատարակուելէ ի ցաւ իր բազմաթիւ համակրողաց այսօր վերստին կուգայ յասպարէզ :

Այնպիսի ժամանակ մը, ուր ազատ երկիրներու մէջ հրատարակուող բաւական թիւով հայ թերթեր կան, հարկ է անդրադառնալ պատճառաբանել չափաւորութիւնը, որք զանազանեալ ձեռնարկելու վերստին ԻՐԱՒՈՒՆՔԻ հրատարակութեան, ինչպէս նաև այն ուղղութեան որուն պիտի հետեւի երբ հայ լրագրաց ... ներքին աշխատութեանց վերջնուել պէտք ըլլայ :

Ամփոփելու պահանջովդ իր հեռագրոյց նպատակին, պիտի ջանանք ջատագով կանգնիլ հանրաշէն գործունէութեան սկզբունքին եւ ըստ կարելւոյն ազգայնոց մէջ փոխադարձ համերաշխութեան ոգին, որպէս զի այն կրնայ է ազգային հաւաքական ուժ մը կազմելու Ազգ. Դատին մեծութեան համապատասխանող.

Հայութեան այս աճեալ ճգնաժամին ազգային ամեն ընկերութեանց, հաստատութեանց և գործիչներու համար սրբազան պարտականութիւն մ'է համերաշխաբար գործել և իրենց բոլոր ուժերն ամփոփել ի խնդիր ընդհանրական միութեան

Ահա այս է մեր սկզբունքը :

Մեր դիտաւորութիւնն է նաև թարմ լուրեր հաղորդելով օգտակար ըլլալ ազգային այն դասակարգին, որ եւրոպական լեզուի մ' անտեղեակ. Հայերէն թերթեր միայն կարող են կարդալ, ասոնք, ինչպէս յայտնի է, հեռաւոր տեղեր ի լոյս կընծայուին և կը բերեն մեզ ընդհանրապէս լուրեր որք մեզ համար կորուսած են արդէն նորութեան հրապոյրն :

Մեր միւս դիտումն է Թրքախօս ազգայիններն, որ դժբաղդաբար բազմաթիւ են ի Պուլկարիա, ու երբ հետաքրքրել ազգային գործերն ամենէն շահեկան և կարևոր լուրերն ինչպէս նաև մեր յարմար տեսնուած յօդուածներն ու թղթակցութիւններն ամբողջ այլ կամ համառօտելով պարզ տաճկերէն լեզուաւ հրատարակելով թերթիս մէջ.

Եւ ամեն հայ յարկի մէջ մտաքը զբօսնելու համար տարեկան 6, վեցամսեայ 3, և եռամսեայ 2, Ֆրանքի չնչին գումարին փոխարէն կը զրկուի լրագիրս :

Սիրելի է մեզ յուսալ որ ամեն ազնուասիրտ գնահատելով մեր ազնիւ ... ու դիտումները, չը պիտի զլանայ մեզ այն աջակցութիւնը որուն կը կարօտի մեր ձեռնարկ :

Խմբագրութիւն Իրաւունքի

---

Օգույանլարա

1885 սենեսինտէ նէշրէ օլունան «Իրաւունք» նամ կազէթա պազը սէպէպլէրտէն տօլայը պիր միւտտէթ թատիլ օլունմայա մէճպուր օլուպ հիւսնի թէվէճճիւհլէրինի ճէլպ իթմիշ օլտուղը ... թէէսսիւֆի մուճիպ օլմուշտու. իշտէ մէմլէքէթ ... թէքրար ... պաշլատըղը ...

Շու ... ...

«Իրաւունք» ըն մուհարրիրլերինին ...

Ջիւնքի չու ... ...

Միլլէթին չու ... ...

...

Պէզըմ պիլտիկիմիզ ... Աւրուփա լիսանլարընը պիլմէյէն ... Հայճա ...

...

Պու ... ...

Խուլասա խատէրիգի իշպու ... տէրսինտէ ...

Իրաւունք, ըն մուհարրիրլերի :

## ԱՆՆԱՐԿ ՄԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

Հայրենիք քանդուած, Եկեղեցիք պղծուած, ընտանեկան պատիւ ոտնակոխ, անհատական կեանք և գոյք հայ ազգի ճարակ եղած ամեն ինչ որ հայ է, ամեն ինչ որ հայու անուն ունի, անասելի հալածանաց մատնուած, որ կը սպառնայ չքանալու միացած ամբողջ հետ որ թուի թէ կը պատրաստուի իր անհետ ճանկերուն մէջ ճզմել մահացնել Հայաստանեայց կեանքը :

Ահա Հայութեան վիճակն ի Թուրքիա :

Ահաւոր է ճգնաժամն, աւելի աղետալի Հայոց վիճակն քան Լէնկթիմուրի, քան Արշակունեաց ժամանակներ

Հայ մայրեր, այս վիճակին առաջին տպաւորութեան ներքև վերցուցելով և չկարենալով մաքել անմիջական ելք մը, կը սկսին յուսահատ ըլլալ. Հայ սրտերուն կը սպառնայ տիրապետել վհատութիւն Հայութեան ապագային նկատմամբ. Հայ ազգի ոչնչանալ . . . ահա ահաւոր մտածումն . . .

ահա խնդիրն, որ արեան լճի մը կը վերածէ ամեն հայ սիրտ.

Սակայն կրնանք ունենալ այս մասին մի քիչ.

Կասկածանց տպաւորութիւնը, որ հրդեհից մէջ եւրոպական թիւնը ջանամք պահ մը իբրեւ թօթափել խորհրդական և ... դատապարտելի ... զննել սա մեծագոյն հարցն :

Հայութեան ... թիւնը մեզ կը ստիպէ որ ... է քաղաքագիտօրէն այն կործէք թէ կրնան իրենց հաշիւներուն զոհել և ոչնչացնել ազգ մ' որ իր քաղաքական գոյութիւնը նուիրագործած է իր պատմութեամբ, իր յատուկ քաղաքակրթութեամբ իր ազգային գրականութեամբ, բարգաւաճ լեզուով և Քրիստոնէական հաւատոյ համար իր տուժած մարտիրոսութեամբ :

Կրնամ խօսքով ասենք. Հայութիւնը իր պանծալի ազգ. Յատկութիւններէն կամ պատմական հանգամանքներէն բխող քաղաքական մեծ ուժի մը տէրն է :

Այս անվիճելի է :

Արդ՝ բնիկ ուժը կարող է քանդել անշուշտ ինչ որ ... թականէ, և առ երկու իրօք Թիւրքահայաստանի մէջ ինչ որ իր ազգեցութեան ներքև կարող էր իյնալ.

Սակայն բնիկ ուժէն վեր ... ազգի մը մէջ և այդ բարոյական ուժն է, որ Հայութեան հիմն է անսասան որուն չեն կարող հասնիլ սուր և սուսեր.

Ով որ Հայութիւնը բնաջինջ ընել կուզէ, պարտի յառաջ ջնջել նախապէս Հայ լեզուն եղծանել

